ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 124
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Ջրահովիտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Մասիս համայնքի (Ջրահովիտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը (Ջրահովիտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-079-0024-0035 կադաստրային ծածկագրով 0.18887 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր և 03-079-0024-0036 կադաստրային ծածկագրով 0.18302 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	03-079-0024-0035 կադաստրային ծածկագրով 0.18887 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման և 03-079-0024-0036 կադաստրային ծածկագրով 0.18302 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նշված պահանջը (կցվում է),

4. Մասիս համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ջրահովիտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի (Ջրահովիտ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «17» «ապրիլի» 2025 թ.